լուխ իւր, և իսկոյն կալաւ զնա ջերմն, և վաղվաղակի մեռաւ:

Կոստանդիանոս Մոնոմախ՝ և Հելինէ մայր նորա՝ սկսան յամի Տեառն ՋՀԳ. մայր և որդին ինքնակալեալք ամս ԺԷ. Մոնոմախս այս ԺԲ. ամաց թագաւորեաց. և զի երարձ զիշխանութիւն մօրն, վասնորոյ և մայրն խաբէութեամբ կալեալ կուրացոյց զնա. քանզի ցաւէր աչք նորա, և մայրն դեղոց պատճառօք՝ զխաւարեցուցանօղ մատոյց դեղ. և ինքն կառավարեաց զթագաւորութիւնն: Յաւուրս սորա ՅԾ. եպիսկոպոսք ժողովեցան, և սահմանեցին զՀոգին սուրբ 'ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ, որ էր թուականն քրիստոսի ՌՃՀԲ:

Նիկեփորոս սկսաւ յամի Տեառն ՋՁԹ. ինքնակալեալ ամս ինն: Պատճառ թագաւորելոյ սորին այս էր, զի տածիկք նախատէին զՅոյնսն՝ թէ կին է թագաւորն ձեր. և վասն այնր արհամարհանաց բերեալ թա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան